

ԱՐՄԱՆ ՀԱԿՈՒՋԱՆՅԱՆ

«Արատտա քրնսալթինգ» ՍՊԸ,
իրավաբան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Սույն գիտահետազոտական աշխատության շրջանակներում քննարկվում է 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման մոդելի պայմաններում Ազգային ժողովի գործունեության բնույթը և լիազորությունների շրջանակը պետության արտաքին քաղաքականության ոլորտում:

Հիմնաբառեր- արտաքին քաղաքականություն, խորհրդարանական կառավարման մոդել, միջազգային պայմանագիր, վավերացում, սահմանադրություն:

2005 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի զարգացումը, ինչպես նաև համաշխարհային հասարակարգի ներազդեցությունը պետության քաղաքական-իրավական համակարգի ամբողջության վրա ցույց տվեցին սահմանադրական դրույթների՝ մասնավորապես պետական կառավարման համակարգի մարմինների գործունեության սահմանները կանխորոշող սահմանադրաիրավական նորմերի վերանայման և ժամանակի մարտահրավերներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարման մոդելին՝ կիսանախագահական համակարգին ներհատուկ և պետության քաղաքական ու իրավական մշակույթում առկա թերությունները հաղթահարելու ճանապարհը կանխորոշվեց կառավարման խորհրդարանական համակարգին անցնելու հրամայականի միջոցով:

Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների համատեքստում 2014 թվականին ներկայացված հայեցակարգում ընդգծվել է, որ սահմանադրական բարեփոխումներով խորհրդարանական կառավարման ձևին անցնելու պարագայում հնարավոր է հասնել միասնական գործադիր իշխանության, առանց դուալիստական գործադիր իշխանության վտանգի, հատկապես երկրի համար կենսական կարևորություն ունեցող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ արտաքին քաղաքականությունը, ազգային անվտանգությունն ու

պաշտպանությունը, և միևնույն ժամանակ հնարավոր կլինի բացառել իշխանության գերկենտրոնացումը գործադիր իշխանության ղեկավարի ձեռքում, ով միաժամանակ ձեռքբազատված կլիներ խորհրդարանի առջև քաղաքական պատասխանատվությունից՝

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների՝ արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ձևավորվող խորհրդարանական կառավարման մոդելն ունի ինչպես մի շարք ընդհանրություններ հայտնի այլ մոդելների հետ, այնպես էլ մի շարք էական յուրահատկություններ, որոնք որոշակի հիմքեր են տալիս գնահատելու այդ մոդելը որպես առանձնահատուկ «հայկական» մոդել:

Ինչպես ցանկացած խորհրդարանական կառավարման մոդելներում, 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների համատեքստում նույնպես իշխանության կենտրոնը խորհրդարանն է: Սահմանադրական փոփոխությունների հիման վրա, պետական խորհրդարանական կառավարման մոդելին բնորոշ առանձնահատկությունների պայմաններում, սահմանադրորեն ամրապնդվեց Ազգային ժողովի սահմանադրաիրավական կարգավիճակը: Եթե մինչև սահմանադրական փոփոխությունները 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 62-րդ հոդվածով արձանագրված էր Ազգային ժողովի միայն պետական համակարգի օրենսդիր իշխանությունը լինելու հանգամանքը, ապա սահմանադրական փոփոխություններով սահմանադրաիրավական դրույթները հստակ նախանշում են Ազգային ժողովի ոչ միայն պետական համակարգի օրենսդիր, այլ նաև ժողովրդի ներկայացուցչական մարմինը լինելու փաստը (88-րդ հոդվածի 1-ին մաս):

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Կարելի է ընդգծել, որ Ազգային ժողովի՝ ժողովրդի միակ ներկայացուցչական մարմինը լինելու հանգամանքից են բխում Ազգային ժողովի՝ սահմանադրորեն ամրագրված մի շարք գործառույթները, որոնց թվին են դասվում գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողական գործառույթը, պետական բյուջեի ընդունման գործառույթը, միջազգային պայմանագրերը վավերացնելու, կասեցնելու և չեղյալ հայտարարելու գործառույթը, պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու գործառույթը, ռազմական դրությունը վերացնելու կամ ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարելու գործառույթը և այլն:

«Պետության գործառույթ» հասկացությունը բնորոշվում է որպես պետության գործունեության հիմնական ուղղություններ, որոնցում արտահայտվում և կոնկրետացվում է պետության սոցիալական նշանակությունը: Համապատասխանաբար, պետական մարմնի գործառույթները կարելի է բնորոշել որպես այդ մարմնի գործողությունների հիմնական ուղղություններ, որոնցում արտահայտվում է տվյալ մարմնի սոցիալ-նպատակային նշանակությունը⁴:

Հիմնվելով տվյալ ընդհանուր տեսական մեկնաբանության վրա՝ հնարավոր է առանձնացնել Ազգային ժողովի արտաքին գործառույթը, որպես սահմանադրորեն վերջինիս վերապահված հիմնական գործառույթների համակարգի բաղադրատարր:

Այսպես՝ Սահմանադրության 119-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«Ազգային ժողովը կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել ռազմական դրությունը կամ չեղյալ հայտարարել ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը»:

Հինք ընդունելով վկայակոչված հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում Կառավարությունը հայտարարում է ռազմական դրություն, ուղերձով դիմում է ժողովրդին և կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք», սպա կարող ենք ընդգծել Ազգային ժողովի այդ լիազորությունն իր արտաքին գործառույթի համակարգի մեջ ընդգրկված լինելու փաստը:

Եթե փորձենք բովանդակային ամբողջության մեջ մեկնաբանենք վերոգրյալ սահմանադրաիրավական նորմերը, սպա կարող ենք ընդգծել, որ պե-

տության արտաքին հարաբերությունների ոլորտում Ազգային ժողովին վերապահված ռազմական դրության վերացման կամ ռազմական դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացման չեղարկման իրավասությունը կարելի է դիտարկել մաս որպես ռազմական դրություն մտցնելու Կառավարության իրավասության նկատմամբ հավասարակշիռ գապման մեխանիզմ: Վերոշարադրյալը, ըստ էության, տեսականորեն հանգում է սահմանադրական փոփոխությունների համատեքստում գործադիր իշխանությանը վերապահված արտաքին հարաբերությունների մեկնաշնորհային դիրքի նկատմամբ խորհրդարանական իր տեսակով որոշակի վերահսկողության, մինչդեռ դրա կիրառելիությունը գտնում ենք գործնականում կարող է հանդիպել փակուղու, պայմանավորված գործադիր իշխանությունը ղեկավարող վարչապետի, խորհրդարանական մեծամասնության թեկնածու լինելու սահմանադրաիրավական դրույթի պահանջից:

Ազգային ժողովի արտաքին գործառույթի ապահովմանն ուղղված սահմանադրաիրավական լիազորությունների շարքում առանձնահատուկ է միջազգային պայմանագրեր վավերացնելու, կասեցնելու և չեղյալ հայտարարելու լիազորությունը (116-րդ հոդված): Այդ լիազորության կարևորությունը պայմանավորված է միջազգային հարաբերությունների ոլորտում միջազգային պայմանագրերի առանցքային նշանակությամբ:

Պայմանագիրը միջազգային հարաբերությունների կարգավորման քաղաքական և իրավական կարևորագույն միջոցներից մեկն է, որի օգնությամբ են լուծվում միջպետական հարաբերությունների առավել կարևոր և բարդ հիմնախնդիրները: Այն ապահովում է միջազգային իրավակարգի կայունությունը: Պայմանագրային նորմերը մեծ հնարավորություններ են ընձեռնում առկա միջպետական հարաբերությունների վերակառուցման և նոր հարաբերությունների հաստատման համար⁵: Ուստի դժվար է գերազնահատել Ազգային ժողովի՝ Սահմանադրության 116-րդ հոդվածով ամրագրված լիազորության վճռորոշ դերը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ոլորտում:

Միջազգային պայմանագրերի վավերացումը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից օրենք ընդունելու կամ հանրաքվեի միջոցով միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար պարտադիր ճանաչելուն ուղղված ներպետական ընթացակարգ է, որով պետությունը վերջնականորեն համաձայնվում է կնքել

www.aracadatutyunjournal.com

սահմանված ձևի պայմանագիրը: Մինչդեռ պայմանագրի չեղյալ հայտարարումը միջազգային պայմանագրի ստորագրումից հետո մինչև միջազգային պայմանագրի վավերացումը կամ հաստատումը Հայաստանի Հանրապետության՝ տվյալ միջազգային պայմանագրով կապված չլինելու պատշաճորեն ձևակերպված կամաարտահայտությունն է:

Պատմականորեն միջազգային պայմանագրերի վավերացման և չեղյալ հայտարարելու իրավունքը պատկանել է պետության գլխին: Սակայն ժամանակի ընթացքում միջազգային պայմանագրերը սկսեցին ավելի ու ավելի թափանցել պետությունների ներպետական իրավունքի համակարգ՝ ստիպելով վերջիններիս դրանցում բովանդակված դրույթներին համապատասխան փոփոխություններ կատարել ներպետական օրենսդրության մեջ: Իսկ վերջին տարիներին համաշխարհային հանրությունը հաստատեց միջազգային նորմերի գերակայության սկզբունքը ազգային օրենսդրության նկատմամբ⁶: Այդ սկզբունքն ուղղակի կերպով ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝

«Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»:

Ասվածից պարզորեն հետևում է միջազգային պայմանագրերի վավերացման և չեղյալ հայտարարման գործընթացին պետության օրենսդիր իշխանության մարմնի մասնակցության անհրաժեշտությունը: Որպեսզի միջազգային պայմանագրերի և ներպետական օրենսդրության միջև չծագեն էական հակասություններ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է Ազգային ժողովի մասնակցությունը միջազգային պայմանագրերի վավերացման և չեղյալ հայտարարելու հարցի լուծմանը: Այսպիսով Սահմանադրության 116-րդ հոդվածով թվարկվում է այն միջազգային պայմանագրերի շրջանակը, որոնք ենթակա են վավերացման Ազգային ժողովի կողմից:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կնքման, վավերացման, հաստատման, ուժի մեջ մտնելու, կատարման, փոփոխման, չեղյալ հայտարարման, գործողության երկարաձգման և կասեցման և դրանց հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով⁷:

Այսպիսով, միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության ներպետական իրա-

վահամակարգի բաղադրատարր է դառնում և պարտադիր կիրառելիության հատկություն է ձեռք բերում կամ Ազգային ժողովի կողմից վավերացվելու, կամ Նախագահի կողմից հաստատվելու միջոցով, ընդ որում, Ազգային ժողովի կողմից վավերացման ենթակա միջազգային պայմանագրերի շրջանակը սահմանափակ է, իսկ այդ շրջանակից դուրս միջազգային պայմանագրերի՝ Հայաստանի Հանրապետության համար պարտադիր իրավաբանական ուժ ստանալու ներպետական գործընթացն իրականացվում է Հանրապետության Նախագահի կողմից հաստատվելու միջոցով:

Միջազգային իրավունքում չկա նախապես կանխորոշող որևէ նորմ թե որ պայմանագրերն են ենթակա վավերացման: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այն սահմանվում է պայմանագրով կամ դրան մասնակից պետությունների ազգային օրենսդրությամբ: Ընդ որում, յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում, թե պետական որ մարմնի կողմից և ինչ կարգով պետք է վավերացվի կամ հաստատվի միջազգային պայմանագիրը: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ երկրների մի մասում միջազգային պայմանագրերը վավերացնում են պետությունների գլուխներն ինքնուրույն, ուրիշ երկրներում՝ պետությունների գլուխները՝ խորհրդարանի համաձայնությամբ, իսկ երրորդներում՝ խորհրդարանն ինքնուրույն:

Միջազգային պայմանագրի հաստատումը պետության գլխի, կառավարության կամ մեկ այլ մարմնի կողմից դրա վերջնական հաստատումն է: Կան միջազգային պայմանագրեր, որոնք ուժի մեջ են մտնում ոչ թե վավերացման, այլ ստորագրման հիմքով: Սակայն, առանձին պետությունների օրենսդրությամբ նախատեսվում է, որպեսզի դրանց մի մասը ստորագրվելուց հետո հաստատվի համապատասխան պետական մարմնի կողմից:

Վերոշարադրյալի համատեքստում հաշվի առնելով՝

- 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունում դասական խորհրդարանական կառավարման մոդելի հռչակումը,

- Ազգային ժողովի՝ ժողովրդի ներկայացուցչական մարմնի և պետական կառավարման համակարգի օրենսդիր իշխանության հռչակվելու հրամայականը, ինչպես նաև

- միջազգային պայմանագրերի՝ Հայաստանի Հանրապետության ներպետական իրավահամակարգի առանձնահատուկ բաղադրատարր լինելու հանգամանքը՝

առաջարկում ենք, որ Հայաստանի Հանրապե-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տության համար միջազգային պայմանագրերին պարտադիր իրավաբանական ուժ տալու ներպետական գործընթացում Ազգային ժողովին վերապահված սահմանադրաիրավական գործառույթը չսահմանափակվի միջազգային պայմանագրերի որոշակի խումբ շրջանակի նկատմամբ վավերացման իրավասությամբ, և ընդգրկի նաև վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերի ողջ համակարգն առհասարակ՝ անկախ դրանց բնույթից և կարգավորման առարկայից՝ առնվազն Ազգային ժողովի կողմից վերջնական հաստատում և/կամ համաձայնություն ստանալու մեխանիզմի առկայությամբ:

Անհարժեշտ է ընդգծել, որ Ազգային ժողովը Կառավարության առաջարկությամբ միջազգային պայմանագրերը վավերացնում է այն բանից հետո, երբ Սահմանադրության 168-րդ հոդվածի համապատասխան ՀՀ սահմանադրական դատարանը որոշում է դրանցում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը: Ուստի, Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել: Այստեղ ցանկանում ենք ուշադրություն դարձնել այն հարցին, թե Սահմանադրական դատարանում այս համատեքստում ինչն է դառնում քննարկման առարկա: Ըստ էության, Սահմանադրական դատարանը որոշում է միջազգային պայմանագրերով ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը: Ինչպես արդեն ընդգծել ենք, միջազգային պայմանագրերի վավերացման կամ հաստատման սահմանադրական արտաքին գործառույթի միջոցով այդ պայմանագրի՝ ներպետական իրավահամակարգի բաղադրատարր դարձնելու գործընթացի իրավական կարգավորումը սահմանում է «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքը: Ընդ որում, օրենքը հստակ սահմանում է որոշակի ներպետական ընթացակարգ՝ միջազգային պայմանագրի նախագծի ներպետական համաձայնությունից մինչև դրա վավերացումը կամ հաստատումը, իսկ այդ գործընթացում ընդգրկվում են հանրային իշխանության տարբեր մարմիններ՝ արտաքին գործերի, արդարադատության, ֆինանսների նախարարությունները, Կառավարությունը, վարչապետը, Հանրապետության նախագահը, Ազգային ժողովը: Կարող ենք փաստել, որ այս ընթացակարգի պահպանումը իմպերատիվ պահանջ է, իսկ մեր ուսումնասիրության առարկայի տեսանկյունից այն, ըստ էության, հանրային իշխանության թվարկված մարմինների միջազգային հարաբերություններում որոշակի գոր-

ծունեության իրավական կանոնակարգումն է: Սակայն պետք է փաստել, որ սահմանադրաիրավական դրույթները չեն կարգավորում այն իրավիճակից բխող հետևանքները, երբ միջազգային պայմանագրի վավերացման կամ հաստատման գործընթացում այս կամ այն պատճառներով կարող են չպահպանվել այդ ներպետական ընթացակարգի պահանջները: Գտնում ենք, որ նշված հնարավոր անցանկալի դեպքերի բացառման իրավական ճանապարհն այն է, որ Սահմանադրական դատարանին պետք չէ միայն սահմանափակել միջազգային պայմանագրով սահմանված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշմամբ, այլ նաև անհրաժեշտ է ստեղծել իրական հնարավորություն բացահայտելու միջազգային պայմանագրի վավերացման կամ հաստատման ներպետական գործընթացում հանրային իշխանության մարմինների կողմից սահմանված սահմանադրաիրավական պահանջների պահպանման հարցը: Այս մոտեցումն առավելապես ուղղված է վերահսկելու արտաքին գործառույթի տվյալ ոլորտում հանրային իշխանության մարմինների գործունեության սահմանադրական հիմքերի պահպանումը:

Անդրադառնանք նաև Ազգային ժողովի արտաքին գործառույթի համակարգի մաս կազմող միջազգային պայմանագրերի գործողության կասեցման և դրանց չեղյալ հայտարարման իրավասության կենսագործման ընթացակարգերին:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969թ. կոնվենցիայի⁸ 54-72-րդ հոդվածները անդրադառնում են այնպիսի երևույթների, ինչպիսիք են միջազգային պայմանագրի գործողության կասեցումը և չեղյալ հայտարարումը, դրանց հիմքերը, ընթացակարգը և հետևանքները:

Այսպիսով, Կոնվենցիայի 54-րդ հոդվածի համաձայն՝

«Պայմանագրի դադարեցումը կամ մասնակցի դուրս գալը կարող է տեղի ունենալ.

ա) պայմանագրի դրույթներին համապատասխան, կամ

բ) բոլոր մասնակիցների համաձայնությամբ՝ ցանկացած ժամանակ պայմանավորվող մյուս պետությունների հետ խորհրդակցելուց հետո»:

Այսինքն, Վիեննայի կոնվենցիան մատնանշում է որոշակի հիմքեր, որոնց առկայության և/կամ բավարարման դեպքում միայն հնարավոր կլինի դադարեցնել միջազգային պայմանագիրը կամ կասեցնել դրա գործողությունը: Յուրաքանչյուր գործող միջազգային պայմանագիր պարտադիր է դրա

մասնակիցների համար և պետք է նրանց կողմից բարեխղճորեն կատարվի, ինչպիսի պայմաններում պայմանագրի չեղյալ հայտարարման կամ գործողության կասեցման ընթացակարգը չպետք է ծառայի որպես պետության կողմից ստանձնած պարտավորություններից խուսափելու գործիք:

Այս ամենին զուգահեռ, «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 22-րդ հոդվածը պարունակում է հիմնականում ընթացակարգային բնույթի իրավական նորմեր միջազգային պայմանագրերի գործողության կասեցման կամ չեղյալ հայտարարման վերաբերյալ, որպիսի պայմաններում չեն սահմանվում այն հիմքերը, դեպքերը, իրավիճակները, երբ միջազգային պայմանագիրը, որի կողմ է նաև ՀՀ-ն, կարող է չեղյալ հայտարարվել, կամ դրա գործողությունը կարող է կասեցվել:

Վերոշարադրյալի համատեքստում գտնում ենք, որ Ազգային ժողովի կողմից Հայաստանի Հանրապետության արտաքին հարաբերություններին իր մասնակցության սահմաններում միջազգային պայմանագրերի կասեցման և/կամ չեղյալ հայտարարման լիազորության պատշաճ կենսագործումն ապահովելու համար անհրաժեշտ է սահմանել միջազգային պայմանագրերի գործողության կասեցման կամ չեղյալ հայտարարման հիմքերը՝ «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիային համապատասխան:

Սակայն, արտաքին քաղաքականության բնագավառում Ազգային ժողովի դերը չի սահմանափակվում Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված լիազորությունների իրականացմամբ:

Ընդհանրապես պետք է նկատել, որ ժողովրդավարական պետություններում խորհրդարաններն արտաքին քաղաքականության ոլորտում կարևոր և յուրահատուկ տեղ են զբաղեցնում: Խորհրդարանները միջպետական հարաբերություններում հանդես չեն գալիս որպես պետության ներկայացուցիչներ, չեն կարող պետության անունից կնքել միջազգային պայմանագրեր, խորհրդարանի ներկայացուցիչների հայտարարությունները պետության վրա որևէ պարտավորություններ չեն դնում: Դրա հետ մեկտեղ, խորհրդարաններն ակտիվորեն մասնակցում են միջպետական հարաբերություններին, ընդունում են այլ խորհրդարաններին հասցեագրվող ուղերձներ, մասնակցում են միջխորհրդարանական միությունների աշխատանքներին⁹:

Ամփոփելով վերոշարադրյալ վերլուծության արդյունքները՝ նշենք, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո Հայաստանի Հանրապետությունում հաստատվեց կառավարման խորհրդարանական մոդելը, որպիսի պայմաններում Ազգային ժողովը պետության արտաքին քաղաքականության իրականացման համատեքստում ներկայացվեց որպես պետական կառավարման ողջ համակարգում առանձնահատուկ և էական կարևորություն ունեցող հանրային իշխանության մարմին:

www.aradaradutyjournal.com
¹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2014թ., Երևան, էջ 34:
² Ընդունվել է 06.12.2015թ., տե՛ս սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118:
³ Հարությունյան Ա., Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսություն, Երևան, 2016թ., էջ 111:
⁴ Տե՛ս, Алексеев С., Право на пороге нового тысячелетия, Մոսկվա, 2000թ., էջ 113, Алексеев С., Линия права, Մոսկվա, 2006թ., էջեր 261-262, Венгеров А., Теория государства и права, Մոսկվա, 2005թ., էջեր 167-168, Այվազյան Հ., Ժամանակակից պետության գործառույթները, Երևան, 2011թ., էջեր 10-14:
⁵ Տե՛ս, Колосов Ю., Международное право, Մոսկվա, 1995թ., էջեր 120-121, Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002թ., էջեր 101-103, Егоров С, Международное право, 2016թ., էջեր 248-250:
⁶ Տե՛ս, Այվազյան Ն., Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Երևան, 2016թ., էջ 226:
⁷ Ընդունվել է 23.03.2018թ., տե՛ս սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2018.03.29/24(1382) Հոդ.406:
⁸ Ընդունվել է 23.05.1969թ.:
⁹ Տե՛ս, Шестакова Л., Международное право, Մոսկվա, 2005թ., էջ 205:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Алексеев С.С. Право на пороге нового тысячелетия. М., 2000.
2. Алексеев С.С. Линия права. М., 2006.
3. Հարությունյան Ա., Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսություն, Երևան, 2016թ.:
4. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2014թ., Երևան:
5. Венгеров А. Б. Теория государства и права. М., 2005:
6. Այվազյան Հ., Ժամանակակից պետության գործառույթները (տեսական և կիրառական հիմնախնդիրներ). իրավ. գիտ. թեկն. գիտ. աստիճ. հայցման ատենախոսություն, Երևան, 2011:
7. ՀՀ Սահմանադրություն (ընդունվել է 06.12.2015թ.):
8. Ю. М. Колосов, В. И. Кузнецов. Международное право., М., 1995.
9. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002:
10. Егоров С.А. Международное право. М., 2016.
11. Այվազյան Ն., Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Երևան, 2016թ.:
12. «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-213-Ն (ընդունվել է 23.03.2018թ.):
13. «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիա (ընդունվել է 23.05.1969թ.):
14. Шестакова Л.Н. Международное право, М., 2005.

Арман Акобджанян
Юрист ООО “Аратта консалтинг”

РЕЗЮМЕ

*Законодательная власть Республики Армения в системе
реализации внешней политики*

В рамках данной исследовательской работы обсуждается характер деятельности Национального Собрания и объем его полномочий в сфере внешней политики государства в условиях парламентской модели управления в Республике Армения после конституционных изменений 2015 года.

Ключевые слова: *внешняя политика, парламентская модель управления, международный договор, ратификация, Конституция.*

Arman Hakobjanyan
“Aratta consulting” LLC, Lawyer

SUMMARY

*The Irgislative power of the Republic of Armenia in the system
of foreign policy implementation*

Within the framework of this research work, the nature of the activities of the National Assembly and the scope of its powers in the field of the state’s foreign policy are discussed in the conditions of the parliamentary governance model in the Republic of Armenia after the constitutional changes of 2015.

Key words: *foreign policy, parliamentary governance model, international agreement, ratification, constitution.*

Բնագիրը ներկայացվել է 29.11.2023թ.
Ընդունվել է տպագրության 19.12.2023թ.
Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)
իրավաբանական գիտությունների թեկնածու Վ. Կարապետյանը